ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 63-Ն

31 հոկտեմբերի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N -67-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29 և 33 հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2012 թվականի բյուջեի հաստատման մասին» N 67-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի 18 մայիսի 2012 թվականի թիվ 3 և 24 օգոստոսի 2012 թվականի թիվ 8 արձանագրությունները Մարալիկի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող 23,631 հա գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն (ջրովի վարելահող) ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ, համայնքի բյուջեի վարչական մասի 7415 հոդվածից (համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ) պակասեցնել 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) դրամ:
2. Համապատասխանաբար բյուջեի վարչական մասի ծախսային մասից պակասեցնել 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) դրամ, այդ թվում՝

1) 01. 3. 3.51 գործառնական դասակարգման (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 4234(տեղեկատվական ծառայություններ) հոդվածից պակասեցնել 40 000 (քառասուն հազար)դրամ, 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից՝ 50 000 (հիսուն հազար)դրամ:

2) 05.6.1.53 գործառական դասակարգման (շրջակա միջավայրի պաշտպանություն) 4213 (կոմունալ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 50000 (հիսուն հազար) դրամ :

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

31 հոկտեմբերի 2012 թվական
ք. Մարալիկ